

38. ԲԱԶՐԿԱՆ

Կէղնի, չէղնի թյուճարըմ կէղնի։ Էդ թյուճարն է՝ կէլնի օր էրթա թյուճրութենի. եր կէլնի օր էրթա, կասե. «Ջանըմ, ես կէրթամ թյուճրութենի, իմ կնիկ կմնա մինակ տուն, կարելի է վախենա խույրմ կպի հ՚ինք, յամ մեկըմ գա, սոսրթե զինք։ Կանի կնիկըմ բերիմ դնիմ ուր խեչ ու թողիմ էրթամ»։

Հ՚էլավ օր ուրիշ կնիկըմ բերեր դներ կնկա խեչ, թողեր էրթեր, մեկ լէ փոշեմնավ։ Ասեց. «Վալլա՜յի, ուրիշ կնիկ լէ չըմ բերի, դու գինաս կնկան լէ իթիպար կէղնի, օտրի կնիկ, կարելի է խաբեց ու զիմ կնիկ հանեց ճամբուց։ Կդնիմ մեկ լէ զինք մինակ տուն, հաց ու ջուր կդնիմ բոլ ուր խեչ, կթողիմ էրթամ»։

Բերեց հաց ու ջուր բոլ դրեց կնկա խեչ ու ինք թողեց գնաց։

Ասեց.—Կնի՜կ, չվախենաս, ամսու մը սորա, ես հ՚ոդա իմ։

Հ՚էլավ բարեմնաց էղավ մըա ուր կնիկ, բարցավ զուր ձիանք ու հ՚ընկավ ճամբախ։

Թյուճարըն թըղ էրթա ուր ճամբու հետ, մինք դառնանք վըր կնկան։

Թե շարաթըմ, թե էրկու կնիկ տնեն ամենևին դուրս չէլավ. օր մը լէ իմալ էղավ, ջուր խըլըսեր էր, հ՚էլավ վերցուց զուր կուժ, գնաց հ՚աղբուր օր ջուր բերեր։

Հ'էլավ օր գնաց ջրի, էդ հ'էրկրի վազիրը հոտ կանուկ էր, զկնիկ տեսավ։ Զկնիկ օր տեսավ, սիրտ ընկավ հ'ինք թե՝ «Իմա՞լ զէդ կնիկ ձեռք բերիմ»։

Տեսավ օր չկոցավ ձեռք բերեց, գնաց տուն հ'ընկավ ջըլեր, ծանդր հիվնդցավ։

Դոքթորըմ կէլներ, մեկ կմտներ, վազիրն է հիվանդ, մեկ չհասկացավ զէդոր ցավ։

Պառավըմ ասեց.—Ես լէ կէրթամ իշքեմ, կարելի է ես բան մը կհասկընամ։

Հ'էլավ գնաց իշքեց. օր տեսավ, ասեց.—Վազի՛ր, ես գինամ քու ցավն ինչ է։

Վազիրն ասեց.—Օր գինաս՝ ասե տեսնամ։

Պառավը ասեց.—Դու գացեր իս հ'ազբուր, ֆըլան թյուճրի կնիկ էկեր է հ'ազբուր օր ջուր տանե, տեսեր իս, հիվնդցեր իս։

Վազիրն ասեց.—Պառավ, զըմեն տոքթորներ բերի վըր ընծիկ, մեկըմ զիմ ցավ չհասկցավ, դու իմա՞լ հասկցար։ Օր հասկցար, կարելի՞ է զէդ կնիկ ջինիս ընծիկ. օր ջինիս՝ ուխտ էղնի աստծու հ'առջև օր զքզիկ դնիմ կշռքի մեկ թայ, մեկ թայ լէ՝ օսկի, քաշիմ իտամ քզիկ։

Պառավն օսկու ձեն օր լսեց, ասեց.—Թը՛ղ էղնի։

Վազիրն ասեց.—Ես հ'առջին հեղ ասի քզիկ, թե օր զիս իմ արտի մուրազին հասուս, հար օր ինչ քու լեզուն շուռ հ'իգա, կիտամ, թե օր չէրիր՝ գլուխդ կէրթա։

Պառավն ասեց վազիրին.—Ես հեղըմ ասեր իմ՝ էդ բան հասավ հ'իս, էլ դու լախա չունիս։

Հ'էլավ վազիրի տնեն ու դեմ քշեց թյուճրի տուն։ Էկավ թյուճրի տուն, տեսավ օր կնիկ մինակ նստուկ էր, բարև տվեց կնկան ու հ'ընցավ նստավ։ Օր հ'ընցավ նստավ, ասեց.—Քուրի՛կ, դու թյուճրի կնի՞կն իս։

Կնիկն ասեց.—Հա՛։

Պառավն ասեց.—Թյուճար օր էկավ կէրթեր թյուճրութենի, հ'ըռաստ էկավ ընծիկ։ Ասեց. «Պառավ, իմ կնիկ մինակ իմ թողի տուն, էկի, կարելի է վախենա, հ'էլի գնա խեչ մանցի, հարի ես հ'իգամ, ես հ'իգամ՝ զքզիկ հըմալ չըմ թողի»։ Ես վերցի ուրին ասի. «Թը՛ղ էղնի վըր գլխուս ու աչվիս, կէլնիմ կէրթամ»։ Էլա ու էկա դեմ էգա տեխ։

Թյուճրի կնիկ ձեն չհանեց, ասեց.—Էկեր իս, բարով խերով իս էկի։

Պառավն նստավ էդտեխ, գիշեր ու ցերեկ զկնիկ կպահեր, հինգ-վեց օր մնաց. օր մը պառավ ասեց կնկան. —Լաո՛, էդա կէնե թե ամիսըմ, թե էրկու՝ քու էրիկ գացեր է թյուճրութենի, քու գլուխ առանց լվա է։ Զքու թադարուկ տես, լուսուն առնեմ զքզիկ, էրթամ բազնեք։

Ներքև ձեռաց լէ, ձեն տվեց սադրազամին, թե. «Վաղ զկնիկ կառնեմ կէրթամ բազնեք, թըղ հ'իդա հ'ոնի տեսնա»։

Վազիր հ'էլավ լուսուն շուտ քշեց բազնեք։

Պառավ լէ զթունդիր վառեց, հ'իշուց, ավլեց զտախտ, թափեց, զբողչեն զարկեց հ'անթե տակ ու հ'ընկավ կնկա հ'առջև, գնաց բազնեք։ Էդոնք օր հ'էլան կէրթեն բազնեք, էկան հ'իշան բակի մեջ օր էլնեն էրթեն, էդ տեխ էդ բազրկնին հավորիկըմ կեր գըրուկ էր աչքունք, տեսավ օր ուր խաթուն հ'ընկեր է պառվու հ'ետև կէրթա, էլ թրփուտ չէրեց։ Ասեց.—Խաթո՛ւն, դո՞ր կէրթաս։

Խաթուն ասեց էդ հավքին, թե.—Բազնիք կէրթամ։

Հավորիկն ասեց.—Աճալա չէ, նստի հ'ուտա, քզիկ բանըմ ասիմ, սորա գնա։

Էդ հըմալ օր ասեց, քաշեց զաթոռք տակ, նստավ։ Պառավն ասեց.—Ջանը՛մ, քելե էրթանք, դու լէ շատ բանի անկաճ կէնիս։

Կնիկ ասեց.—Չէ՛, չըմ հ'իդա, իմ իրկա թանրիհն է, ես էդոր խոսքի տրկեն չըմ կըռնա էլնի։

Կնիկն օր նստավ, հավքն առավ ու ասեց.—Խաթո՛ւն, աղեկ անկաճ էրե։ Էդա քաղքի մեջ, ժըմընկով տղեմ՝ կէղնի, կծռի ախչկա մը վրեն, յոթ տարի կէրթա կիդա, էդ ախչկա հերն ու մերն զուրանց ախչիկ չըն իտա։ Օր մը լէ տղի սրտին թախտ կէղնի, կէլնի, կառնե զէդ ախչիկ ու կփախնի կէրթա ուրիշ քաղաք մը։ Կփախնի կէրթա ծովու մը պռունկ կկանի, կտեսնա օր էդ տեխ կյամիճիմ՝ կա կանուկ։ Տղեն ասեց կյամիճուն. «Կյամիճի՛, կյամիճի՛, էկո զիս ու զիմ նշանած առ քու կյամու մեջ, հ'ընցու էն դին, էրթանք մըր արևուն արև մ'էնինք»։

Էդ կյամիճին յահուդի էր։ Տղեն օր հըմալ ասեց, ուր աչք հ'ընկավ էդ ախչիկ։ Ասեց. «Ես իմա՞լ էնիմ զէդ տղի գլուխ ուտիմ, զէդոր նշանլուն առնիմ ձեռքեն»։

Մտածեց, հարցուց.—Տղա՛, ձըր հետ հաց ու ջուր կա՞։

Տղեն ասեց.—Չէ։

Տղեն օր ասեց՝ չէ, կյամիճին խաբեց, ասեց.—Տղա՛, էդա գաղու հ՚ետև ֆրոուն մը կա, հաց կծախին, գնա քզիկ ու քու նշանլուին քիչըմ հաց առ էկո, առնինք զիրար, էրթանք։

Էդ հըմալ օր ասեց, միտք շնութեն էր, խաբեց զտղեն հիռեցուց, բալքիմ առնե զախչիկն ու փախնի։ Կյամիճին օր էդ հըմալ ասեց, տղեն թավակալի էր, ավտըցավ, հ՚էլավ գնաց օր հաց բերեր։ Տղեն օր գնաց, կյամիճին էր, զախչիկ վերուց թալեց կյամու մեջ ու զկյամու գլուխ թողեց։ Առավ զախչիկն ու գնաց։

Տղեն գնաց ու դարձավ էկավ։ Դարձավ օր էկավ, տեսավ նը՛ ախչիկ ա էդ տեխ, նը՛ յահուդի ու նը՛ կյամի։ Դրփեց վըր չոքերուն. «Հե՛յ վախ, խաբեց զիս, առավ զիմ նշանլուն ու գնաց» —ասեց ինքն ուրին։

Հավորիկն ասեց.—Խաթո՛ւն, իմալ օր յահուդին խաբեց զէն տղեն առավ զկնիկն ու գնաց, տղեն փոշեմնավ, էլ ձեռք չընկավ, հըմալ դու լէ կփոշմնիս, օր հ՚էսօր էրթաս բաղնեք։

Խաթունն վերուց ասեց պառվուն. —Պառավ, ես հ՚էսօր չը՚մ հ՚իգա բաղնեք, մանցեր իմ ամիսըմ անլվա, թըղ մնամ շաբաթըմ լէ, գալ շաբթուն նոր կէրթանք, հ՚էսօր թըղ մնա։

Պառավն ասեց.—Ջանը՛մ, էդի հավք մըն է, էդոր քյամալ ի՞նչ է օր դու անկաճ կէնիս, էկո՛ էրթանք, օտք մը զարկի քու դոլվըթին։

Կնիկն ասեց.—Չէ՛, քի չէ՛, ես էդոր խոսքի տկեն չըմ հ՚էլնի, օր հ՚էլնիմ՝ գլուխս կէրթա, իմ իրկա թանրին հըմալ է։

Ինչ լեզու բանցուց, չըկոցավ զկնիկ խաբեր։ Պառավ քոռ փոշման թողեց դարձավ էկավ։ Ասեց վազերին.—Չէղա՛վ էդա շաբթուն, թըղ մնա մեկել շաբթուն։

Էդպես օր ասեց, մեկ լէ վազիրն հ՚էլավ դըքդրքալով գնաց հ՚ընկավ ջըլեր։ Մնաց մեկել շաբթուն։

Էմ լէ էն օր օր էկավ, պառավն ասեց կնկան.—Ջանը՛մ, հերիք է քու գլուխ անլվա մնա, հ՚էլի էրթանք բաղնեք լվանամ, մեկ լէ դարձի էկո քու տուն, ո՞ր ինչ կէնե քզիկ։

Կնիկ զուր թադարուկ տեսավ, օր հ՚էլներ էրթեր, պառավ մեկ լէ ներքեանց ճուհաբ ճամբեց վազիրին. «Թըղ հ՚ինք հ՚էլնի, հ՚իգա բաղնեք, զկնիկ կակղցուցեր իմ, էսօր կառնիմ հ՚իգամ, թըղ իշքեռ»։

Վազիր հ՚էլավ շուտ գնաց բաղնեք։

Պառավ մեկ լէ վառեց, ավլեց, հ՚իստրկեց, վերցուց զբողչեն

զարկեց հ՚անթի տակ, իշան օր կէրթեն, հավք մեկ լէ կանկըցուց զկնիկ։

Ասեց.—Խաթո՛ն, աստված խեր էնե, մեկ լէ ի՞նչ է էղի, հըմ-լա քոքվորեր իս, հ՚ո՞ւր կէրթաս։

Կնիկ ասեց.—Կէրթամ բաղնեքն։

Հավքն ասեց.—Խաթո՛ն, հ՚ընցած օր էկար կէրթեր, ճիռոքըմ ասի քղիկ, մի՞տքդ է։

Կնիկն ասեց.—Միտքս է։

— Շատ աղեկ,—ասեց,—օր միտքդ է, հ՚ո՞րի չըս կէնա հարցու ասի, թե իմա՞լ էղավ էն ախչիկ։

Խաթունն ասեց.—Ես ի՞նչ դինամ իմալ էղավ. օր դու գինաս իմալ էղավ, դը պատմե։

Խաթուն մեկ լէ քաշեց զաթոռք ուր տակ, նստավ, պառավ մնաց կանուկ։

Հավորիկն ասեց.—Խաթո՛ն, աղեկ գինդ էրե. յահուդին առավ զախչիկ գնաց, ու ուր քաղաք հ՚էլավ դուրս։ Օր էկան, հ՚էլան էդ քաղաք, կյամին կանավ ծովու պռուկ։ Յահուդին ասեց.—Ախչի՛, հ՚էլի կտանիմ զքզիկ, ընծիկ կէնիմ կնիկ։

Ախչիկ լէ խելոք էր, ասեց.—Տնաշե՛ն, էդա քանի օր ծովու վրեն սըռ ըռանկ լէ չթողեր է իմ հ՚էրես, տարեր է զիմ քիթ ու մոթի ջավարն, ձըր տուն իսկի կնիկ՝ քուր է, ախպրկի է չկա՞, գնա, կնիկըմ, ձեռքըմ հալավ, կտորըմ սապոն ճամբե հ՚իգա, լվացվիմ, փոխիմ դիմ շորեր, էլնիմ հ՚ընկնիմ հ՚ետև, հ՚իգամ։ Այպառաշ էղնի, հըմլա հ՚էլնիմ հ՚ընկնիմ քու ետև, ի՞նչ կասին ընծիկ ու քզիկ։

Յահուդին ավտըցավ, ասեց.—Օղորդ լէ քու ասածն է, դու վըր ընծիկ խելոք ես։ Դու կանի հ՚ուդա, ընծիկ իրեք հասուկ ախչիկ կա, կէրթամ կիտամ ձեռքըմ հալավ, քիչըմ սապոն, թըղ առնին հ՚իգան, թամըզըմ թոթվվի, լվացվի, հ՚ուշիկ-հ՚ուշիկ հ՚էլի հըտ ուրանց էկու։

Յահուդին թողեց էկավ, ասեց ուր ախչկներուն.—Ախչիկըմ բերեր իմ հանդե ծովու պռուկ, բերեր իմ ձգի մամ, հ՚էլեք ձըր մամու շորերուց ձեռքըմ շոր, կտորըմ սապոն առեք գացեք, թըղ լվացվի, փոխե զուր շորեր, առեք էկեք։

Ախչկներ հէլան էկան, տեսան օր ախչիկըմ հանդե մըշ կյամուն, հ՚էլան մտան կյամին ուրանց մամու խեչ։ Չէ տաս-տրսնուհինգ օր մանցեր էր յահուդու հետ վըր ծովուն էդ ախչիկ, էփեյի կհասկներ կյամիճութենից, եբ օր էդ ախչրկներ մտան կյամին,

*ախչիկ աղեկըմ զկյամու գլուխ թորկեց, հ'ուրվեր էկեր էր, մեկ լէ դարձավ ընդիով, գնաց։ Չորս ախչիկ հրտ իրար հ'ընկան վըր ծովուն, հա՛ հուդա, հա՛ հունա, գիշեր ու ցերեկ քշեցին, էկան տեխըմ հ'էլան դուրս. թողին զկյամին ծովու պռուկ, ուրանք լէ հ'էլան վըր քարիմ՝ նստան, արևու հ'առշև կպառկեն։ Էդ ծովու մոտ լէ քաղաքըմ կեր։ Էդ քաղաքի փաշի տղեն լուսուն հ'էլեր էր կօլըրտեր. էկավ ծովու պռուկ օր լվացվեր, տեսավ էդ չորս ախչիկ հ'ոդի նստուկ ին։ Զէգոնք օր տեսավ, ասեց.—Աստված տվեց ընծիկ, երսունվեց նշանլու ունիմ, չորս լէ կտանիմ, կէղնի քառասուն,—ու ասեց.—Ախչկնե՛ր, հ'էլեք էրթանք։

Էն մեկ ախչիկն օր յահուդին տարեր էր կեոյա ուրեն կնիկ պիտի էներ, ասեց.—Դու ո՞րն իս, կասես մղիկ՝ հ'էլի էրթանք։

Տղեն ասեց.—Ես էդա քաղքի փաշի տղեն իմ, կտանեմ ղձղիկ էնիմ ընծիկ կնիկ։

Ախչիկն ասեց.—Դու փաշի տղա իս, ամոթ չէ՞ քզիկ, մենք հ'էլնինք հ'ընկնինք քու հ'ետև հ'իգանք։ Հալբաթ քզիկ հրմկա ուրիշ նշանլու լէ կա, յախուտ քուր ունես, մամ ունես, գնա ճամբե թըղ հ'իգա հ'ոդա, հ'էլնինք հ'ընկնինք հ'ետև ուրանց, հ'իգանք։

Տղեն ասեց.—Աղեկ լէ դու կասիս, շուքր աստծու, ընծիկ երեսունվեց նշանլու էլ կա, կէրթամ ճամբեմ, թըղ հ'իգան, հ'էլեք հ'ընկեք հ'իրարու հետ, էկեք։

Փաշի տղեն դարձավ էկավ, ասեց ուր նշանլուներուն.—Հ'էլեք, գացեք, ծովու պռուկ կյամիմ՝ կա, մեջ չորս ախչիկ, առեք էկեք, ղըմնուդ հաբսնեք հ'իտրանց կէնիմ։

Հ'էլան ու էկան։ Էդ հ'եռսունուվեց ախչիկն է, օր էկան հ'ոդի, տեսան զէդ չորս ախչիկ, հ'էլան մտան կյամու մեջ, կօլըրդեն, ախչկներ լէ ուրանց հ'ետևեն մտան։ Օր մտան, էն ախչիկն օր յահուդին տարեր էր կէներ ուրեն կնիկ, զչվան քաշեց ու զկյամու գլուխ թողեց։ Հ'էլան քառսուն ախչիկ ու հ'ընկան վըր ծովուն։ Իրեք օր թամամ էդ քառսուն ախչիկ վըր ծովուն գացին։ Գացին ծովու պռուկ քեոշկ ու սարեմ՝ կեր, հ'էլան դուրս։ Թողին զկյամին հ'ոդի, հ'էլան մտան քոշկ օր օլըրդեն, ի՞նչ տեսնան աղեկ է։ Տեսան օր քառսուն մարդու տեխ թալուկ է հ'ոդի, ամեկ մեկ տեխի խեչ մեկ-մեկ խայլոն կա դրուկ ու մարդ չկա։ Էլան ամեկ մեկ ախչիկ վըր տեխիմ՝ նստան, կպուցին ղուրանց խայլոններ ու ֆստըցուցին։

Դու մըսի՝ էդ տեխ քառսուն հարամի ջըրդի տեխ է էղի։ Հ'իր-

կուն օր էղավ, էդ քառսուն հարամիք օր դարձան էկան, տեսան ամեկու տեխի վրեն ախչիկըմ կա նստուկ։ Ասին՝ «Դու մ՚ասի օր աստված տվեց մդիկ, էկեք ամեկ մեկուս մեկ հատ»։

Ամեկ ախչկա մը կուշտ նստան։ Էդոնք օր էկան ախչկներու կուշտ նստան, ախչկներու դիլպանդն, էն օր յահուդին պիտի տաներ էներ ուրեն կնիկ, ասեց.—Դե՛հ, լրբութեն մ՚էնիք, ձըր մեծ ո՞րն է, մըր մեծ ո՞րն է դարաճա-դարաճա. ամեկ զուր հունգուֆ թըղ դոնա վերու։

Ջըրդեսներու մեծն ասեց.—Ախչիկ շատ աղեկ կասե, կանեք տեսնանք, էդոնց մեծ ո՞րն է։ Ախչիկն ասեց.—Ես իմ։ Ախչիկն օր ասեց ես իմ, շըրդն ալ ասեց՝ ես իմ։ Մինք կառնինք ղիրար, էնդոնք լէ, թըղ ճանչնան ու վերուն։

Ախչիկն ասեց.—Շատ աղեկ էդի էղավ, բան մը լէ կասիմ։ Դուք մեկ հարամի մարդմ՚ իք, հ՚էսօր իրեք օր է, օր մենք վըր շրին կիդանք անոթի ծառավ, ձըր տուն քիչըմ՚ հաց, գինի չկա՞, մենք ուտինք կշտանանք, նոր գրկինք զիրար պառկինք, գիշեր հ՚էրկեն է։

Ջըրդեսներու մեծն ասեց.—Հ՚ո՞րի չկա, քառսուն տարվան գինին կա մըր տուն։

Հ՚էլավ գնաց ու կարասըմ գրկեց բերեց դրեց ախչկա հ՚առջև։

Ախչիկն է, լցեց ու ուժդան տվեց, լցեց ու տվեց ու էդոնք լէ ախչկներու սիրուն չէ՛ չասին, առան ու խմեցին, հար բըհեշ էղան, պատան։ Օր զէդոնք սարխոշցուց թափեց գետին, տիլպանդ ախչիկն ուր հ՚ընկերներուն ասեց.—Ախչըկնե՛ր, կանելու վախտ չէ, դը հ՚էլեք, ամեկ ուր մարդու կշտեն կքաշե զդանակ, կկտրե զգլուխ, կհանե զհալավն, կհագնի ու կընկնի ճամբախ։ Էդ հըմալ ղքառսուն հարամիքն էլ սպանեցին, ախչկներ, հագան զէդոնց հալավ ու հ՚էլան հ՚ընկան ճամբախ։ Էղան ադաթա մարդանակ։

Հավորիկն ասեց.—Խանո՛ւմ, էդ փաշի տղեն է օր տեսավ նշանլունները հ՚անգրցան չէկան, հ՚ինք ուր օտնով հ՚էլավ էակվ ծովու պռուկ, բալքիմ՚ առնե էրթա։

Ի՞նչ հ՚իգա տեսնա աղեկ է։ Էկավ տեսավ օր նը՛ նշանլու կա, նը՛ ախչիկ կա, նը՛ կյամի, իմալ օր դրեր իս, էկո գտի։

Փոշըմնավ, դփեց վըր ծնկներուն, ասեց.—Հա՛յ, հո՛ւ, իմա՞լ քոռցուցի զիմ աչք։

Խաթուն, հըմկա քումն է, հ՚էսօր էրթաս բազնեք, էն փաշի տղի պես, կփոշըմնիս, կթողես զգետին, կդփես գլուխդ. կէրթաս

ըստհաղ՝ դու գինաս, չըս էրթա՝ դու գինաս։

Խաթունն ասեց.—Պառա՛վ, ես չըմ հ՚իդա։

Պառավն մեկ լէ ասեց.—Ջանը՛մ, դու հո՞րի զէդա օյօյեկ կէ-նիս իմ գլուխ. էդոր քյամալն ի՞նչ է օր դու էդոր անկաճ կէնես, էդի հավքմ է ուր հալի հետ։

Կնիկն ասեց.—Ջէ՛, էդ հըմալ մ՚ասի, պառա՛վ, էդի իմ իրկա թանրին է. օր զիմ իրկա թանբին չպահիմ, գլուխս կէրթա։ Թըղ մնա գալ շաբթուն։

Պառավն ասեց.—Բանըմ չասիմ, մինակ քու գլուխ կմնա ա-ռանց լվա։

Կնիկն ասեց.—Իմ գլուխ կմնա առանց լվա, քզիկ ի՞նչ զօր կառնե, հ՚ուշիկ-հ՚ուշիկ կէրթանք։

Կնիկ թողեց գնաց ուր տուն, պառավն հ՚էլավ էկավ բաղնեք, ասեց վաղիրին.—Վաղիր, հ՚էսօր լէ չէղավ։

Վաղիրն ասեց.—Պառա՛վ, վախենամ դու զիս կխաբես, տես օր զիս խաբես գլուխդ կէրթա։

Պառավն ասեց.—Ջանը՛մ, էդ ի՞նչ է կասես, էդի էղնելու բան է, էն լէ խաբեմ, զքզի՞կ խաբեմ։

Մեկ լէ թալին մեկէլ շաբթուն։ Եբ շաբաթ օր էղավ, շուտըմ պառավ հ՚էլավ զթունդիր վառեց, տախտ ավլեց, լողմեմ՚ հաց կե-բան, հ՚էլան զարկեց զբողչեն թեի տակ ու հ՚ընկավ կընկա հ՚առ-շև, հ՚իշան կէրթեն։ Վաղիրին խաբար տվեր էր, թէ՝ հ՚էլի՛, գնա՛ բաղնեք, հանդե հ՚էսօր կառնիմ զնիկ ու կիգամ։

Վաղիր հ՚էլեր էր գացե։ Հ՚իշան օր կէրթեն, մեկ լէ հավորիկն գպառվու հ՚առշևն առավ։

— Խաթուն, էդ հ՚ո՞ւր կէրթաս, հըմլա քոքվորեր իս։

Խաթունն ասեց.—Բաղնեք։

Հավքն ասեց.—Խաթուն, ես հ՚ընցած հեղ քզիկ բանրմ ասի, մի՞տքդ է։

Խաթունն ասեց.—Հա՛, միտքս է։

— Շատ աղեկ, օր քու միտքն է, չհարցո՞ւս թե, էդ ախչկնե-րու հալն իմա՞լ էղավ,—հավորիկն ասեց,—Խաթուն, էդ ախչկներ էղան մարդու թավուր, շատ գացին, քիչ գացին, քաղաքըմ, հ՚էլան դուրս, քառսուն շան են։ Տիլբանդ ախչիկն ասեց.—Ախպե՛ր, մենք քառսուն շան ինք, վի՞ր դուռ էրթանք կանինք, մզիկ քրինք խան ըմ, նստինք մեշ ու հըմն օր գնինք հաց, ուտինք։

Ախչկներ ասին.—Թըղ էղնի։

Գացին խանըմ քրին ուրանց ու լցվան մեջ։ Օր էղավ հացի դահ, աիլրանդ ախչիկն ու ուրիշ ախչիկըմ հ'էլան էրթեն օր հաց բերեն ուրանց։ Էդ հ'էրկրին լէ ադաթ կեր օր թագավոր մեռներ, հավորիկըմ կթողեն, վիր գլխու վրեն դներ, կէնեն ուրանց թագավոր։ Թագավորն մեռեր էր, ղհավորիկն թողին, էկավ վըր էգ աիլրանդ ախչկա գլխու վրեն նստավ։ Էկան ասին.—Դու ի՞նչ մարդ իս։

Ախչիկն ասեց.—Ես խարիր իմ։

Ասին.—Օր խարիբ իս, գնա, մտի քու տեխ, մենք ղմըր հավորիկ կթողինք։

Ախչիկն գնաց մտավ ուր հ'օդեն, ղդուռ լէ աղեկըմ խփուց, ղհավորիկն թողին. օր թողին, օլըրդավ էդ քաղքի մեջ, մարդ չգտավ օր գլխուն նստեր, գնաց գտավ զախչկա հ'օդեն, իջավ փանջարից, դնաց ախչկա գլխու վրեն նստավ։

Էդ քաղքի ժողովուրդ թափավ էկավ, մեկն կասեր՝ խարիբ է, չէղնի, մեկն՝ կէղնի, վերջապես խելոք մարդում՝ մեկ ասեց.

— Ջանըմ, թըղ աղեկ կառավարե ղմզիկ, խարիբ թըղ էղնի, խոմ էն լէ իսան չէ՞։

Վերցին տարին ուրանց էրին թագավոր։ Մարդն էղավ թագավոր, զուր ընկերներ լէ տարավ ուր խեչ։ Օր էղավ թագավոր խըլըսավ, բերեց էդ տեխ ուր քյոչկ ու սարի հ'առջև հ'աղրուրըմ շինեց, կամարըմ կապեց վրեն ու թասըմ կախեց, օր թե հ'ընցնող դարձող խմե ու օղորմի իտա ուրեն։ Որ զաղբուրն շինեց լըմընցուց, բերեց զուր պատկերք լէ քաշեց կանկըցուց վըր հ'աղբրին ու խարախոլ դրեց վրեն, ասեց.—Որն օր էկավ, ա՞խ քաշեց, կբռնեք բերեք ընծիկ։

Էդոր հ'առջի նշանլուն էր, եբ տեսան յահուդին խարեր էր զինք, առեր է զուր կնիկն ու գացե։ Ասեց. «Կանի՛, էրթամ քաղքներ օլըրդիմ, տեսնամ զիմ նշանլուն չը՞մ կռնա գտնա»։ Օլըրդավ, էկավ էդ հ'աղբրի վրեն, դադրեր էր, օր քիչըմ ջուր խմեր, աչք առավ պատվերքն, ա՞խ, ասեց, էդա մ'անի իմ նշանլվի պատվերք։ Էդ տղեն է, ա՞խ օր էրեց, բռնին ու առան էկան թագավորին։

Բերին թագավորի հ'առեջ, տեսավ։ Ասեց.—Տարեք դրեք հ'օդիմ՝ մեջ, մուխյաթ կմնաք օր չփախնի, հ'ըմնօր լուսուն, հ'իրկուն հաց լէ կիտաք ուրեն ուտե։

20—276

Դառնանք յահուդու վրեն։ Յահուդին է, տեսավ, օր նը՛ ուր ախչկներ էկան, նը՛ էդ ախչիկն էկավ։ Հ՚էլավ էկավ ծովու պռուկն օր առներ էրթեր։

Էկավ ի՞նչ տեսնա աղեկ է. նը՛ ախչիկ կա, նը՛ կյամի. հասկըցավ օր ախչիկն է առե փախե։ Ասեց. «Կանի հ՚էլնիմ հ՚ընկնիմ քաղքներ, տեսնամ, իսկի չէ՝ զիմ ախչկներ, չըմ կըռնա՞ գտնա»։

Յահուդին օլըրդավ, օլըրդավ, էկավ էդ հ՚ազբրի վրեն, թաս վերուց օր շուր խմեր, աչքն առավ պատվերքն, ա՛խըմ քաշեց։ Ասեց. «Այնան էն ախչկա պատվերքն է, օր զիմ ախչկներ խաբեց, առավ ու փախավ»։

Զէդ լէ բռնեցին բերին թագավորին. աչքն առնելու պես ճանչցավ օր ուր յահուդին է։ Ասեց.—Տարեք հ՚օդիմ մեշ թալեք ու մուխյաթ էղեք չէլնի էրթա։ Զէն լէ տարան բռնին։

Դառնանք փաշի տղի վրեն։ Փաշի տղեն է, ասեց. «Ջանըմ եռսունվեց նշանլու լէ ընծիկ էդ ախչիկ տարավ կորցուց, հ՚էլնիմ էրթամ, տեսնամ սալըխըմ չըմ կռնա՞ առնի»։ Հ՚էլավ ու հ՚ընկավ ճամբախ. քաղքե-քաղաք, գեղե-գեղ էկավ էդ հ՚ազբրի վրեն վերուց զթասն օր շուր կխմեր, աչքն առավ ախչկա սուրաթն, ա՛խըմ քաշեց։ Ասեց. «Էդա մանի էն ախչկա սուրաթն օր զիմ նշանլունները առավ տարավ»։

Ախ օր քաշեց, հ՚իմցան, բռնին, առան գացին թագավորին։ Թագավոր ճանչցավ, գիտցավ, էդա լէ եռսունվեց նշանլուներու տերն է, փաշի տղեն է։ Ասեց.—Զէդ լէ տարեք թալեք հ՚օդե մը, տվեք ուրեն հաց, թըղ ուտե։ Տարան հ՚օդեմ՚ լէ զէն թալին։ Հ՚իրկուն օր օտք ու ձեռք սըվլավ, էլ մարդ չիգեր էրթեր, զիրեք լէ կանչեց թագավոր բերեց ուր հ՚օդեն։

Հ՚առջին հեղ զտղեն բերեց, ասեց.—Տղա՛, քու գարդ ի՞նչ է, օր էկար վըր հ՚ազբրին շուր խմեցիր, ա՛խ էրեցիր։

Տղեն վերուց ասեց.—Թագավո՛ր ապրած կենա, թող իգին էնէ, ասիմ.

Թագավորն ասեց.—Ի՞զին է։

— Յոթ տարի ծրռուկ ենք ախչկամ՚ վրա, հար ինչ օր էրի, էդոր հերն ու մերն չտվին, հ՚էլա առա, փախա, ասի՝ «Կէրթանք ուրիշ հ՚էրկիրմ՚ աշխատինք, ապրինք»։ Էկանք ծովում՝ պռուկ, էդ տեխ կյամիճիմ՚ կեր, յալվարմիշ էղա, ասի. «Կյամիճի՛, խուրբան կյամիճի, զմզիկ թալ կյամու մեշ, հ՚ընցու էնդեն»։ Կյամիճին ասեց. «Տղա՛, քզիկ ու քու նշանլուին հաց կա՞»։ Ասի. «Չէ՛, չկա»։

Ասեց. «Էդա գարու հ'ետև ֆըռուն մը կա, գնա առ քզիկ ու քու նշանլուին հաց ու էկո. հ'ընցում»։ Հար ես գացի, հաց առա էկա, տեսա օր նը՛ կնիկ կա, նը՛ կյամիճի։ Կյամիճին առեր էր զիմ նշանլուն ու փախե։ Ասի. «Հ'էլնիմ էրթամ հ'էրկրներ, տեսնամ զիմ նշանլուն չըմ կռնա՞ գտնա»։ Օլըրդա, էկա վըր էդա հ'ազբրին, տեսա զէդ պատկերք, ասի մանի իմ կնկա սուրաթ, ա՛խ քաշեցի, առան էկան մըտ քի։

Թագավորն ասեց.—Տարե՛ք զէդի մեկ դին, զյահուդին բերեք։

Բերին զյահուդին, թագավորն ասեց.—Քու դարդն ի՞նչ է օր ախ էրիր։

Յահուդին վերուց ասեց.—Թագավո՛ր ապրած, իմալ օր տղեն թարիֆ էրեց։ Էդ յահուդին ես իմ, խաբի զախչիկն, առա գացի։ Գացինք օր մըր քաղաք հ'էլանք դուրս։ Ասի. «Ախչի, արի տանիմ ղքզիկ էնիմ ընծիկ կնիկ»։ Ախչիկն ասեց. «Թըղ էղնի, կիգամ, բըլե քու հետ չըմ հ'ընկնի հ'իգա, ամո՛թ է։ Գնա քու տուն կնիկ, ախչիկըմ չկա՞, ղրկե թըղ հ'իգա, բերին հըտ ուրանց ձեռքըմ լէ շոր, կտորըմ լէ սապոն, լվանամ զիմ քիթ ու մռութ, զիմ շորեր փոխիմ, հ'էլնիմ հ'իզամ»։ Ասի. «Հո՞րի չկա, ընծիկ իրեք հասուկ ախչիկ կա, կէրթամ իտամ ձեռքըմ հալավ, կտորըմ սապոն, թըղ առնին հ'իգան, փոխե զքու շորեր։ Էլեք էկեք»։ Էկա տվի, առան գացին։ Դե՛հ, իշքե հար հ'իգան, դե՛հ, իշքե հար հ'իգան։ Ասի. «Ես հ'էլնիմ էրթամ բերիմ»։ Հ'էլա, էկա. նը՛ նշանլու կեր հ'ոնի, նը՛ ախչիկ կեր, նը՛ կյամի. ախչիկն առեր է զկյամին ու զիմ ախչըկներ, դարձեր էր հետ։ Ես տեսա օր էդ ախչիկ զիմ ախչկներ տարավ, հ'էլա ու հ'ընկա հ'ետևեն։ Էկա էդա հ'ազբրի վրեն, շուր խմեցի, տեսա զպատվերքն մաներ էդ ախչկա պատվերք, ախ քաշեցի, բռնին առան էկան քու մոտ։

Ես օր յահուդին էդ հըմալ ասեց, թագավորն վերուց ասեց. «Շատ աղեկ ասիր, դու զէդ ախչիկն օր տարար, ծովու վրեն դու ու ինք մենակ եք, սալաֆ սուլաֆըմ չկերար հ'ուրնե, ձեռք թալել է-մալել է, զողոբդն ասե»։

Յահուդին ասեց՝ չէ։

Թագավորն ասեց. «Զէդ լէ տարեք էն դին, բերեք ըստհաղ զփաշի տղեն». օր բերին, թագավորն հարցուց, ասեց.—Փաշի՛ տղա, էնդոնք զուրանց դարդ նաղլ էրին, քու դարդն ի՞նչ է։

— Թագավոր ապրած կէնա, իմալ օր էդոնք նաղլ կէնին. իմ

դարդ լէ էդոնց դարդեն է։ Լուսուն հ'էլա էկա ծովու պռուկ, տեսա օր չորս աղջիկ կեն էդ տեղ նստուկ ու կյամիմ՝ կանուկ պռուկ։

Ասի. «Աղջի՛, դուք հ'ո՞րին իք նստի հ'ոդի, էկեք տանիմ, էնիմ զձզիկ ընծիկ կնիկ»։ Էնդոնցնե մեկ՝ դիլրանդ աղջիկն վերուց ասեց. «Դու փաշիմ՝ տղա իս, ամոթ չէ՞ մենք հ'ընկնինք քու հ'ետևեն, հ'իդանք։ Ձըր տուն կնիկ չկա՞, գնա կնիկըմ էրկու ճամբե հ'ընկնինք հետ ուրանց, հ'իգանք»։ Ասի. «Հ'ո՞րի չկա, փառք աստծու, ընծիկ կա երսունվեց նշանլու, չորս դուք կէղնեք, կէնե քառսուն, կէրթամ զիմ նշանլուներ կղրկեմ, հ'ընկեք հետ ուրանց, էկեք»։ Էկա ճամբի, էկան. դե՛հ, բաքլամիշ էրե հ'իգան, չէկան. ես հ'էլա էկա, ասի՝ էրթամ առնիմ հ'իգամ։ Էկա ի՞նչ տեսնամ աղեկ է, նը՛ աղջիկ կա, նը՛ նշանլու, նը՛ կյամի. էդ տիլրանդ աղջիկն դրեր էր կյամու մեջ զըմեն առե ու գացե։ Էկա տուն, ասի. «Հըմլա չէղնի, կանի հ'էլնիմ էրթամ իմ նշանլուներու հ'ետև»։ Հ'էլա ու հ'ընկա քաղքներ, օլըրդա, էկա էդա հ'աղբրի վրեն, թաս վերուցի օր շուր խմենք, աչվս առավ պատվերքն։ Ասի, ալավոկի էդա էն աղջկա սուրաթն է օր զիմ նշանլուներ առավ էկավ, ա՛խըմ քաշեցի. բռնին, բերին քու մոտ։ Իմ դարդ լէ էդա է։

Թագավորն հրաման էրեց ուր մշկներուն օր էրթան, առնին շալատչին ու հ'իգան, ղյահուդու գլուխ զարկին։

Գացին առան էկան զշալատչին, ղյահուդու գլուխ տվեց զարկել։

Բերեց զուր ընկերներ ըստհաղ կանկցուց, ասեց փաշի տղին. — Էկո՛, հ'առեշ։

Փաշի տղեն էկավ թամանդար էղավ, կանավ։

Թագավորն ասեց.—Կտեսնա՞ս զէդա հ'եռսուն ու ին մարդ օր կանուկ ին։ Էդոնք մարդ չին, աղջիկ ին, հագեր ին մարդանակ հալավ, էղեր ին մարդ։ Հ'եռսուն ու վեցն քու նշանլուներն ին, իրեք լէ յահուդու աղջկներն. առ քզիկ գնա։ Ֆախաթ քզիկ բանըմ կասիմ, օղ էնիս ձգիս քու անկաճ՝ հեղմ՝ լէ օր աղջկա է, մարդու է հ'ռաստ կիգաս, առանց քնքնելու չվերցուս տանիս, չասիս՝ արի էրթանք։

Տվեց զէն հ'եռսուն ու ին աղջիկ լէ, փաշի տղին դրեց ճամբու։

Փաշի տղեն առավ զուր նշանլուներ, շնորհակալ էղավ, թամանա էրեց ու հ'էլավ գնաց։ Ոբ զէդոնք ճամբու դրեց գնաց, կանչեց զտղեն բերեց։ Ասեց. «Տղա՛, չէ՞ հասկցար յահուդու ու փաշի տղի դարդն ի՞նչ էր։ Ես էն աղջիկն ենք։ Էկանք, հ'ռաստ էկանք

քյոշկի մը, էդ տեխ հ'էլանք մտանք, տեսանք օր քառսուն տեխ թալուկ կա էդ տեխ, ամեկ մեկ տեխի խեշ մեկ-մեկ խայլոն դրուկ կեր։ Դու մ'ասի էդի քառսուն հարամեսներու քյոշկն է էդի, հ'իրկուն օր էղավ, էդ հարամեք դարձան էկան, ամեկ մեկ ախչկա վիզ թալեց զուր ձեռք, էն ասեց՝ էդա ընծիկ, էն ասեց՝ էդա ընծիկ։ Ասի. «Դե՛հ, լըռուութեն մ'էնեք. ամեկ ուր դարաճով թըղ առնե, ո՞րն է ձըր մեծ, ցուցուցեք, մենք լէ ցուցունք զմըր մեծ, մեծեն թըղ առնեն, հ'իշնեն պղտիկ»։ Իմ հետ խոսող հարամին ասեց. «Էդոնց մեծ ե՛ս իմ»։ Ախչկներ լէ դիս ցուցուցին։ Էկան օր մեկ լէ ձեռք թալեն վըր մըր վղնվեր, ասի. «Ի՞նչ էղավ ձղիկ, գիշեր հ'երկեն է, ինչ խդար կուզեք քեֆ էրեք, մենք ճամբուց կիդանք, անոթի ինք, էդա տեխ հալբաթ շենլըք է էղի, քիչըմ գինի, հաց չկա՞ ուտինք, խմինք, սորա ինչ կուզեք էրեք»։

Հարամեսներու մեծն ասեց. «Հ'ո՞րի չկա. քառսուն տարվան գինի կա»։ Գնաց ճետիկ ճըռեմ՝ բերեց դրեց իմ հ'առեշ։ Ես լցի տվի ու էդոնք ախչըկներու սիրուն խմեցին, սարխոշցան, թափան գետին։ Ախչըկներուն ասի. «Ամեկ մեկ ուր տեխի ջըրդի գլուխ թըղ կտրե, հագնի ղհալավն ու հ'ընկնի ճամբախ»։ Հ'էլանք զէդ քառսուն լէ սպանինք, հագանք մարդանակ հալավ, էկանք էդա քաղաք էլանք դուրս։ Քրեցինք, խանըմ ու նստանք։ Էդ հ'էրկրի ադաթն է, օր թագավոր կմեռնի, հավքըմ կա՝ կթողին, կէրթա վիր գլխուն օր նստ..վ, զէնի կէնին ուրանց թագավոր։ Ես ու հ'ընկերմ՝ հ'էլեր ենք կէրթենք հաց բերենք. գացինք օր հաց կբերենք, թողին զէդ հավք, էկավ վըր իմ գլխուն նստավ։ Էկան ասին. «Դու ի՞նչ մարդ իս»։ Ասի. «Խարիր իմ»։ Օր ասի՝ խարիբ իմ, ասին. «Գնա՛, մտի քու տունս»։ Էկա մտա իմ հ'օդեն, մեկ լէ տեսնամ զէդ հավքըն օր թողած են, էկավ փանճարից մտավ ներս, էկավ վըր գլխուս նստավ։ Բերին էրին ուրանց թագավոր։ Ես գինենք օր դու, յահուդին ու փաշի տղեն կընկնեք իմ հ'ետևեն։ Բերի քաշի զիմ պատվերք, կամրով հ'աղբուր մը շինի, կախեցի ու դրի խարախոլ վրեն, ասի՝ «Որն օր կիգա, ախ կէնե, բռնեք բերեք ընծիկ»։

Զէդ ասելու պես, հ'էլավ հանեց զուր թագավորնակ հալավ, հադուց իրկան։ Ասեց. «Նստի՛ վըր էդա թախտին»։ Ինք լէ հագավ կնկնակ հալավ, կանավ մեջտեխ, մարդըմ չլսեց ու սկսան ուրանց քեֆին իշքել։

Հավքն է զուր նաղլ խըլըսցուց չխըլըսցուց, խաթուն նստուկ էր։ Մշակ դուռ պոռաց.—Խաթո՛ն, խաթո՛ն, զդուռ բաց, զթադարուկ տես, բազրկան բաշին էկավ։

Պառավն է, բազրկնի անուն օր լսեց, զբողչեն հ՝անթե տկեն թալեց ու հըմալըմ կըրըզավ, մարդ չտեսավ, հևք թոման նաֆաս վազիրի խեչ մեկ առավ։

Վազիրն օր զպառավ տեսավ, ասեց.—Պառա՛վ, իմա՞լ էղավ։

Պառավն ասեց.—Չէ՛ղավ, իրիկն էկավ, էլ չէկավ բազնեք։

Վազիրն ասեց.—Պառա՛վ, գլուխդ գնաց։

Հըտ ասելն ու զարկելն մեկ էղավ։ Քաշեց զթուր զպառվու վիզ պոլտեց։

Բազրկան էկավ, քիչըմ նստավ՝ ըռհաթավ, խայլոն մը քաշեց, հ՝էլավ էկավ ուր հավքու մոտ։ Ասեց.—Հավորիկ, իմա՞լ եք։

Հավորիկն ասեց.—Փա՛ռք աստծու, աղեկ ինք, հ՝ընկանք ծովու մեջ, պիտի խեղդենք, բայց մեկ լէ լողացինք, հ՝էլանք չոր։

Բազրկան ասեց.—Փա՛ռք աստծու, սալամաթ հ՝էլեր իք, զարար չկա, մարդն օր կա՝ փորձութենե կընկնի լէ, կէլնի լէ, չէ՞ աստված զվերշ բարի էրեց բան չկա։

Նոր նստան իրիկ ու կնիկ կերան խմեցին ու ուրանց քեֆին իշքեցին։

Սադրազամ զպառավն օր սպանեց, հ՝էլավ թողեց, գնաց ուր տուն ու նստավ ինք ուրեն ֆքրավ։

Ասեց.—Կարելի է էդ կնիկն արդար էր, ջանը՛մ, ընծիկ ի՞նչ է էղի, ես սադրազամըմ էղնիմ, հ՝էրկրիմ՝ մեծ ու հ՝ընկնիմ էդա հըմլա բաներու հ՝ետև։

Նոր թարկ տվեց զբազրկնի կնկան։ Սաղցավ հ՝էլավ կանավ վըր ուր օտքերուն։

Աստծուց հ՝իշավ իրեք խնձոր. մեկ՝ ասողին, մեկ՝ լսողին, մեկ լէ՝ անկաճ էնողին։